



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԿՈՉ, ՈՒՂՂՅԸԼ ՀԵՎԱՏԱՅՅԱԼ ՀԱՅԵՐԻՆ

Հայաստանյաց Սուրբելական Սուրբ Սկեղեցու հոգեու սպասավորների և համայնք հավատացյալ ժողովրդի անունից սրտի անհուն գոխումակուրյամբ ողջունում ենք Վիեննայի՝ Խաղաղության Համաշխարհային Խորհրդի ընդհայնված բյուրոյի ոռշաղամեներն ու հայտարարությունը՝ ընդդեմ առումային պատերազմի պատրաստման, ընդդեմ Մասսայական ոչնչացման ծառայող այդ ահարկու զենքի գործածման, որն ուղղված պիտի լինի բոլոր ժողովուրդների խաղաղ ու շինարար առաջընթաց կյանքի դեմ:

Մեր բազմադարյան պատմուրյան ողջ բերացքում բարբարոս արշավանքների ու ավերիչ պատերազմների հետևանով բազում անգամներ տառապած և ճահատակված հայ ժողովուրդը ու Հայ նկեղեցին, անդադար փայփայել են անցյալում՝ ազատ և խաղաղ ապրելու նվիրական իդքը: Անա թե ինչու խաղաղության և ամբողջ աշխարհի ժողովուրդների համերաշխ գոյակցուրյան կողմնակիցների շարժումը այնքան խոր արձագանք է զտել մեր ժողովրդի զիտակցության մեջ, այդ շարժման ստեղծման առաջին իսկ օրից:

Այդ խոր արձագանքի արտահայտիչը հանդիսացավ մեր նկեղեցվո նորոգ հանգուցյալ մեծ Հովկապետ՝ Տ. Տ. Գեորգ Զ. Պատրիարք-Կարողիկոսը, որ իր անմոռանալի կոչերից մեկում պատգամասում էր մեզ բարորդին՝ «Հայաստանյաց Սուրբելական Ս. Նկեղեցինեն, որ հնագոյն եկեղեցիներից մեկն է աշխարհում, մշտական աղորելի է աշխարհի խաղաղության և մարդկանց բարօրուրյան համար: Այսու էլ, Հայոց նկեղեցին, հավատարիմ իր ավանդական սկզբունքներին, իր ձայնն է բարձրացնում խաղաղության օգտին և անվերապահ միանում է խաղաղության կողմնակիցների սուրբ գործին»:

Այս առաքելաջունշ խոսերը կարդաիս ո՞ր հայ մարդու սիրուր չի լցվի ազեիվ ու շերմ եռանդով, և ո՞ր հայ մարդը չի բարձրացնի իր հոգեբռնի աղորդը առ Աստված, որ իրոք աշխարհում հաղթահարեն խաղաղուրյան բարի ուժեցը, որ համայնք մարդկուրյունը այլևս չտեսնի արտասուր ու տառապանք, կործանում ու մահ, որ վրկուրյան ափին հասած մեր ժողովուրդը, մեր վերածնված Մայր Հայրենիքը, սովետական ազատ երայրակցուրյան մեջ, շարունակի իր արդար վերելքը՝ ստեղծարար աշխատանքի ու շինարար կյանքի հանապարհով:

Թասերազմը, իր բոլոր նոր տեսակի մահասփյուր զենքերով, իր վրա է հրավիրել բոլոր բարի կամքի մարդկանց, բոլոր ազգուրյունների լայն զանգվածների ամենախոր ատելուրյունն ու ցասումը: Մարդկային բանականուրյունը

և բարոյական խիղճը չեն կարող ըմբռնել ու երբեք չեն կարող բույլատրել առումային պատերազմի սահմանադրում:

Այն ատոմային ուժը, որի խաղաղ նպատակների գործածումը — ինչպես այդ ցույց տվեց սովետական զիտուրյունը — մոտավոր ապագայի մեջ իսկ՝ անհայտնքաց բացօրության դարաշրջան կարող է բանալ համայն մարդկուրյան համար, չի կարելի համեստութել, որ այդ նույն ուժը ծառայեցվի մարդկային զանգվածային բնաշնչման և բազում սերունդների արդար ժրտիքնով ու հանճարով ստեղծված՝ նյուրական և մշակուրային բարիքների ու արժեքների ոչնչացման:

Մենք հավատում ենք, թե բոլոր ժողովուրդների խիստ զգոնությամբ և բար եկեղեցիների ու կրոնական դպրությունների գործակցությամբ, բոլոյլ պիտի շարվի, որ մարդկանց փորբարիկ մի խմբակ համարձակվի իր հակամարդկային ծրագրերը իրագործել:

Խայեններին բույլ պիտի շարվի սպանել իրենց եղբայրներին: Սովետական աշխարհի և բոլոր երկրների հավատացյալ հայրենակիցներ՝, միացե՛ք բոլորդ անխարի՝ խաղաղության երկնառավ զաղափարի շուրջը և լսեցե՛ք նվիրական ձայնը, որ ահա վերստին հնչում է մեր հազարամյա Մրություն Մրոց՝ Միաձնաւոր Մայր Տաճարից:

Քիսուսավանդ խաղաղության և մարդասիրության կրակով վառված՝ եկե՛ք, միացե՛ք առանց վարանումի՝ խաղաղությունը դպանող և խաղաղության համար մարտնչող բոլոր ազնիվ մարդկանց հետ, սովետական խաղաղատենչ ժողովարդների կողին, և պահանջնեցե՛ք ատոմային ռումբի ու բոլոր տեսակի մասսայական բնաշնչման գեներերի արգելումը:

Եկե՛ք և օգնեցե՛ք հանուր մարդկության սրբազն գործին, քար քարի վրա շարեցե՛ք և կառուցեցե՛ք մարդկային պատմության բոլոր ժամանակների ամենատարիկ պարհապը, որի առաջ պիտի խորտակվեն ամեն տեսակի ռազմական շարադիս համաձայնությունների և ատոմային ռումբերով սպառնացող անսիրտ տոպետների դժոխային ուժերը:

Մեր հայացքն ուղղելով դեպի պայծառ զալիքը, մենք տեսնում ենք այն օրը, երբ ժողովուրդները ձեռք-ձեռքի պված, և ողոգորված խաղաղ ապրելու ու սաեղծագործելու ուժառով, ի պատասխան երկնային Տիրոջ պատգամին՝ հաղթական ձայնով մինչև երկինք պիտի բարձրացնեն իրենց մեծ և սրանշելի նոր ավետիսը՝ «Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն»:

Եվ պիտի իրականանան մեծ մարգարելի կրակե խոսքերը՝ «Եւ ձուկեսցեն զուսիւր իւրեանց ի խոփս, և զուիխ իւրեանց ի մանազս. ոչ առնուցու ազգ յազգի վերայ սուր, և ոչ և ուսանին տալ պատերազմ» (Խայի, թ 4):

Ս. Է Զ Մ Ի Ա Ս Ի Ն Գ Ե Ր Ա Գ Ո Ւ Յ Ն Հ Ո Գ Ե Վ Ո Ր Խ Ա Ս Բ Ի Ա Ս Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Յ Ա Մ Բ Ի Ա Ս Ա Ր Ո Ղ Գ Ե Ր Ա Գ Ո Ւ Յ Ն Հ Ո Գ Ե Վ Ո Ր Խ Ա Ս Բ Ի Ա Ս Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Յ Ա Մ Բ Ի Ա Ս Ա Ր Ո Ղ

Վ Ա Հ Ա Ն Ա Ր Բ Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Կ Ո Ս Ա Ն Ց Ա Ն

Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր Գ Ե Ր Ա Գ Ո Ւ Յ Ն Հ Ո Գ Ե Վ Ո Ր Խ Ա Ս Բ Ի Ա Ս Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Յ Ա Մ Բ Ի Ա Ս Ա Ր Ո Ղ

Ս Ս Հ Ա Ա Կ Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Տ Ե Ր Հ Ո Վ Հ Ա Ս Ա Ն Ն Ի Ս Ց Ա Ն

Վ Ա Զ Գ Ե Ն Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Պ Ա Լ Ճ Ա Ա Ն

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» օրարեր,
Երևան, 29 մարտի 1955 թ.)

